



## ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

### ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Հաղթանակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակները, գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում

Վերապատրաստող մեթոդը՝ Մ. Մկրտումյան

Ուսուցիչ՝ Ն. Ասրյան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները .....	4
Միավորային գնահատում.....	5
<i>ԱՄՓՈՓԻՉ ՊՆԱՀԱՏՈՒՄ</i> .....	11
<i>ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՊՆԱՀԱՏՈՒՄ</i> .....	12
<i>ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ՊՆԱՀԱՏՈՒՄ</i> .....	13
Ձևավորող գնահատում.....	13
<i>ՁԵՎԱՎՈՐՈՂ ՊՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ</i> .....	14
<i>ՁԵՎԱՎՈՐՈՂ ՊՆԱՀԱՏՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՔԱՅԼԱՇԱՐԸ</i> .....	15
Ձևավորող գնահատման գործիքները.....	15
Ինքնագնահատում.....	19
Փոխադարձ գնահատում.....	19
Եզրակացություն .....	20
Օգտագործված գրականության ցանկ.....	21

## Ներածություն

Գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը: Գնահատման միջոցով պարզվում է յուրաքանչյուր սովորողի և դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնագարգացմանը:

«Գնահատում» բառը կրթական համատեքստում կիրառության մեջ մտել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Գնահատումը բազմաբնույթ եզրույթ է, որը սահմանվում է որպես տեղեկությունների ձեռքբերման գործընթաց: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման, կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմը: Գնահատումը կարևոր է երկու առումով: Նախ՝ այն սովորելու և սովորեցնելու անբաժան մասն է և անհրաժեշտ տեղեկություն է տալիս այդ գործընթացների որակի մասին: Միջնակարգ հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատումը ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Հանրակրթության ոլորտում ուսումնառության արդյունքների որակի ստուգումը պայմանականորեն բաժանվում է ներքին և արտաքին գնահատումների: Ներքին գնահատումը կիրառվում է դասի ընթացքում, իսկ արտաքին գնահատումը իրականացվում է դպրոցից դուրս՝ համապատասխան կազմակերպությունների կողմից: Ներքին գնահատումը իրականացվում է տարին մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը, որին մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները: Գնահատումը կարող է լինել օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից, օրինակ՝ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը: Գնահատումը սուբյեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական դատողություններից, սկզբունքներից ու վերաբերմունքից: Սուբյեկտիվ են համարվում բանավոր հարցադրումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները կամ որոշ գործնական աշխատանքներ:

## **Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները**

Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով՝ դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված կարգով: Քանակական գնահատման համար կիրառվում է 10 միավորային սանդղակ, որտեղ որևէ թիվ չի հանդիսանում անբավարար, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ: Քանակական գնահատումը սկսվում է 1 միավորից և չունի անբավարար սանդղակ: Հանրակրթական ուսումնական հաստատությունները կարող են կիրառել գնահատման այլ համակարգ, որը համապատասխանեցվում է 10 միավորային սանդղակին:

Ձևավորող գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում՝ ընթացիկ կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ) և հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին (ամփոփիչ ատեստավորում), որն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված կարգով:

Չափորոշիչային պահանջների կատարումը ստուգելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար կազմակերպել արտաքին գնահատում:

1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ որպես տարեկան ամփոփիչ գնահատական կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի: Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից:

7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից: Այլընտրանքային ծրագրեր իրականացնելու դեպքում կարող է գործել գնահատման այլ կարգ: Կիսամյակային գնահատականների հիման վրա տարեկան գնահատականները ձևավորվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով: 4-րդ դասարանում իրականացվում է ամփոփիչ գնահատում բնութագրման միջոցով, 9-րդ դասարանում՝ ավարտական քննություններ, 12-րդ դասարանում՝ պետական ավարտական քննություններ:

Հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական քննությունների ժամանակ կրթության կառավարման լիազորված մարմնի որոշմամբ կարող են կիրառվել գնահատման այլ համակարգեր:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի գիտելիքների քանակական (միավորային) ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը կարող է իրականացվել ըստ իրենց անհատական ուսուցման պլանի՝ 10 միավորային սանդղակով:

## **Միավորային գնահատում**

Միավորային գնահատումն իրականացվում է ուսումնական նյութի որոշակի մասն ուսումնասիրելուց հետո և ունի վերահսկող գործառույթ: Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշիչի: Այն պետք է լինի օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու յուրաքանչյուր սովորողի իրական կարողությունները: Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:

Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է միավորներով: Միավորային գնահատումը կիրառվում է սկսած 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից: Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում: Միավորային գնահատման անհնարինության դեպքում դասամատյանում դրվում են հետևյալ նշանակումները՝ սովորողի բացակայության դեպքում՝ «բ», պատասխանելուց հրաժարվելու, գրավոր աշխատանքը չկատարելու դեպքում՝ «-»: Միավորային գնահատումը ունի

«մրցակցային» բնույթ:

Միավորային գնահատման ներկայումս կիրառվող տեսակներն են՝

- Թեստ
- Բանավոր հարցում
- Գործնական (լաբորատոր) աշխատանք
- Գրավոր աշխատանք
- Նախագծային
- Թեմատիկ գրավոր աշխատանք

*Նախագծային* աշխատանքը պետք է գնահատել նախապես սովորողին տրամադրվող հիմնական չափանիշներով: Նախագծին չմասնակցող սովորողը չի գնահատվում:

Միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումները: Հայտորոշիչ թեստը ընդգրկում է սովորողի զարգացման հետևյալ ոլորտները՝

- Հաղորդակցական
- Իմացական
- Վարքագծային
- Հուզականային
- Շարժողական

*Բանավոր հարցումը* ևս միավորային գնահատման տեսակ է: Բանավոր գնահատման ժամանակ սովորողը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը դրսևորելով ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Բանավոր հարցման միջոցով պարզվում է սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով՝

- Բանավոր խոսք
- Վերարտադրություն
- Հաղորդակցություն
- Համագործակցություն
- Լեզվամտածողություն
- Գիտելիքի յուրացում
- Ստեղծագործական մտածողություն

➤ Մոդելավորելու կարողություններ

Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրա միջոցով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման և վերարտադրման ընդունակությունները, այլև նյութի գիտակցված ընկալման մակարդակը:

Բանավոր հարցումը կարելի է իրականացնել հետևյալ ձևերով՝

- Առանձին սովորողների՝ տեղում կամ գրատախտակի մոտ հարցման միջոցով
- Սովորողներին ուղղված բանավոր հարցման միջոցով
- Տնային աշխատանքների ստուգման միջոցով
- Համագործակցային (խմբային) տեխնոլոգիաների կիրառմամբ:

Գործնական են կոչվում այն աշխատանքները, որոնք վերաբերվում են սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գործնական կիրառություններին:

Գործնական կարող են համարվել այն աշխատանքները, որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ, օրինակ՝ ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները, ֆիզիկական պատրաստվածությունն ու այլ ֆիզիկական աշխատանքները: Գործնական աշխատանքները լինում են տարբեր բնույթի՝

- Հարցադրումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքում և օգտագործում աղյուսակների ու գծապատկերների տեսքով
- Մոդելների, ձևանմուշների և մակետների պատրաստում
- Դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում (պաստառներ, ցուցափեղկեր, տեսաֆիլմեր, էլեկտրոնային ներկայացումներ և այլն)
- Լաբորատոր աշխատանքների կատարում

Գործնական աշխատանքները կարող են հանձնարարվել ինչպես տանը, այլնպես էլ դպրոցում կատարելու համար: Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են 2 ձևով՝

- Սովորողը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական աշխատանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Մյուս սովորողները անհրաժեշտության դեպքում կատարում են համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ:

- Սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը միաժամանակ՝ յուրաքանչյուր սովորողին տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք: Այս աշխատանքները կատարվում են առանձին տետրում, որն ուսուցիչը ստուգում և գնահատում է դասի ընթացքում կամ դասերից հետո:

Տեղանքում իրականացվող գործնական աշխատանքներն անցկացվում են խմբային մեթոդների կանոններով:

*Թեմատիկ գրավոր աշխատանքը* միավորային գնահատման տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր: Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա ուսուցանելուց հետո: Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշիչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով: Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ գրավոր աշխատանքը կարող է նաև լինել բանավոր կամ գործնական: Կարելի է կիրառել նաև կարճաժամկետ գրավոր աշխատանքներ:

Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի բարդության առաջադրանքներ և դժվար առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում, բարդ և անձանոթ իրադրություններում կողմնորոշվելու կարողություն, գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու հմտություն: Թեմատիկ գրավոր աշխատանքը գնահատվում է 10 միավորային սանդղակով:

*Թեստը* (հարցարան) որոշակի նպատակով ընտրված առաջադրանք կամ առաջադրանքների խումբ է, որի նպատակն է ճիշտ գնահատել սովորողների ձեռքբերումները և արժևորել նրանց ուսումնական գործունեությունը: Թեստ կազմելիս պետք է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար այն նախատեսված է: Առանց նպատակի հստակեցման՝ թեստը հիմնականում վերաճվում է առաջադրանքների անհասկանալի համախմբի:

Ըստ նպատակի՝ թեստը կարող է լինել՝

- ամփոփիչ (առաջադիմության ստուգման) թեստ, որը տրվում է կիսամյակի կամ յուրաքանչյուր թեմայի վերջում՝ ուսումնական նյութի յուրացման մակարդակը ստուգելու համար: Գնահատվում է միավորային տարբեր սանդղակներով, բայց պետք է բերել 10 միավորային սանդղակի:



- ❖ *1 միավոր* – չի ցուցաբերում ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն:
- ❖ *2 միավոր* – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության հետ չառնչվող տարրական գրագիտություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:
- ❖ *3 միավոր* – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակության չափորոշիչային նվազագույն պահանջների անբավարար իմացություն և պարզ առաջադրանք կատարելու պատրաստակամություն:
- ❖ *4 միավոր* – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշիչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ կամ պարզ իրադրություններում կիրառելու կարողություն, և այդ նյութի վերաբերյալ պարզ առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
- ❖ *5 միավոր* – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշիչային նվազագույն պահանջներին համապատասխան իմացություն, ծանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, ոչ բարդ առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
- ❖ *6 միավոր* – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի չափորոշիչային նվազագույն պահանջներին համապատասխան լիարժեք իմացություն, այն կիրառելու կարողություն, հայտնի մեթոդների իմացություն, միջնորդավորված քայլ ենթադրող առաջադրանք կատարելու պատրաստվածություն:
- ❖ *7 միավոր* – ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի իմացություն, ոչ բարդ և միջին բարդության հարցերին տալիս է լիարժեք պատասխաններ, իսկ բարդ հարցերին կարողանում է տալ հիմնավոր պատասխաններ: Կարողանում է ինքնուրույն առաջադրանքներ ձևակերպել, խոսքը հստակ է, կարողանում է ճիշտ օգտագործել հասկացությունները:
- ❖ *8 միավոր* – բարդ առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, ոչ բարդ և միջին բարդության հարցերին տալիս է հստակ և ճիշտ պատասխաններ, ցուցաբերում է անցած նյութի կայուն իմացություն, կարողանում է տեսական գիտելիքները գործնականում կիրառել, կարողանում է մտքերը ճիշտ և հակիրճ շարադրել:
- ❖ *9 միավոր* – բարդ և առավել բարդ առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն,

բացթողում, առաջադրված բոլոր հարցերին տալիս է լիարժեք պատասխաններ, մտածում է արագ, կարողանում է ինքնուրույն խնդիրներ կազմել, լուծել և բացատրել, խոսքը զարգացած է և տրամաբանված:

- ❖ *10 միավոր* - ցուցաբերում է ուսումնասիրված ծրագրային նյութի հիմնավոր իմացություն, անձանոթ իրադրությունում այն կիրառելու կարողություն, կարողանում է անհրաժեշտ նյութը ձեռք բերելու համար օգտվել տարբեր աղբյուրներից:

<b>ՄԻԱՎՈՐ</b>	<b>ԱՆՎԱՆՈՒՄ</b>
10	«Բացառիկ»
9	Գերազանց
8	Շատ լավ
7	Լավ
6	Միջինից բարձր
5	Միջին
4	Բավարար
3	Անբավարար
2	Վատ
1	Շատ վատ

Ստորև ներկայացված են թեստերի օրինակներ.

1) Հետևյալ նյութերից հրը պարզ չէ: (1 միավոր)

ա) երկաթ                      գ) սպիրտ

բ) քլոր                         դ) արծաթ

2) Ո՞ր զույգի նյութերն են նույն տարրի ալոտրոպ ձևափոխությունները: (1 միավոր)

ա) ջրածինը և դեյտերիումը                      գ) ջուրը և գոլորշին

բ) թթվածինը և օզոնը                                 դ) դեյտերիումը և տրիտիումը

3) Հաշվել NaOH-ի հարաբերական մոլեկուլային բաժինը: (1 միավոր)

4) Հաշվել տարրերի զանգվածային բաժինները H<sub>2</sub>SO<sub>4</sub>-ում: (2 միավոր)

5) Գրել Li, Na, Al-ի ատոմների էլեկտրոնային ուրվագրերը: (2 միավոր)

6) Որոշեք տարրերի օքսիդացման աստիճանները հետևյալ միացություններում. (1,5 մ.)

BaO, N<sub>2</sub>O<sub>5</sub>, P<sub>2</sub>O<sub>5</sub>, CO<sub>2</sub>

7) Նշել յուրաքանչյուր տարրի վալենտականությունը. (1,5 միավոր)

CH<sub>4</sub>, H<sub>2</sub>S, SO<sub>2</sub>, SO<sub>3</sub>, P<sub>2</sub>O<sub>5</sub>, CO<sub>2</sub>, N<sub>2</sub>O, MgO, H<sub>2</sub>O:

### **ԱՄՓՈՓԻՉ ՔՆԱՀԱՏՈՒՄ**

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, դրանք հաստատվում են առարկայական մեթոդավորման կողմից և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում: Ամփոփիչ գնահատում է նաև 9-րդ դասարանի ավարտական և 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունները, որոնք ուսուցիչը չի կարող ընտրել: Ամփոփիչ (միավորային)

գնահատման համար կիրառվում է 10 միավորային սանդղակ: 10 միավորային սանդղակում որևէ թիվ չի հանդիսանում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ:

Ինչ ենք գնահատում՝

- Գիտելիք
- Հմտություն
- Դիրքորոշում
- Արժեք

Գնահատման սկզբունքներն են՝

- Վավերություն
- Բափանցիկություն
- Հուսալիություն
- Օբյեկտիվություն
- Հավասարություն
- Իրագործելիություն

Գնահատման հիմնական նպատակները՝

- **Խթանում է** սովորելու ձգտումը
- **Հայտորոշում է** սովորողների ուսումնական հիմնախնդիրները
- **Որոշում է** սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի համապատասխանության աստիճանը չափորոշիչային պահանջներին
- **Ապահովում է** հետադարձ կապ
- **Բարելավում է** կրթության որակը:

### **ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

1-4-րդ դասարաններում գնահատման ժամանակ թվային նիշը փոխարինող որևէ նշան չի կիրառվում, կիրառվում է միայն բնութագրող բացատրական գնահատում: Գնահատման ենթակա չեն սովորողի անհատական հատկությունները, մտավոր գործընթացների ինքնատիպությունը (հիշողություն, արագություն, ընկալում, ուշադրություն և այլն): Գնահատման ենթակա են միայն սովորողի անհատական նվաճումները: Առաջընթացը նկարագրող թերթիկը լրացվում է էլեկտրոնային եղանակով:

## ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայտորոշիչ գնահատման նպատակն է բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքը և արժեքները ուսումնական գործընթացի որևէ փուլի՝ ուսումնական տարվա, առարկայի, դասընթացի, նոր թեմայի ուսումնասիրման մեկնարկից առաջ: Հայտորոշիչ գնահատումը հնարավորություն է տալիս պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ընտրելու ուսուցման կազմակերպման արդյունավետ ձևեր, միջոցներ և մեթոդներ: Հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ կախված ուսումնասիրվող առարկայի, թեմայի և սովորողի կամ ուսումնական խմբի տարիքային առանձնահատկություններից: Հայտորոշիչ գնահատման ձևը ընտրում է ուսուցիչը:

### **Ձևավորող գնահատում**

Ձևավորող գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որի նպատակն է բացահայտել յուրաքանչյուր սովորողի կամ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները, ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար: Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում: Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդները ընտրում է ուսուցիչը, այն հաստատվում է առարկայական մեթոդախմբի անդամների կողմից և կարող է լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Ձևավորող գնահատում իրականացնելիս օգտագործվում են սովորողի ուսումնական ձեռքբերումները և դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ: Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է

միավորային գնահատման արդյունքների վրա: Պահպանելով գնահատման իրականացման հետևողականությունը՝ կարելի է հասնել արդյունքների բարձր մակարդակի:

### **Ձեռնարկի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ**

- Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
- Սովորողի ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
- Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում:
- Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում:
- Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

Ձևավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարքները կիրառվում են յուրանքանչյուր դասին: Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ՝

- Որքանով են սովորողները հասկացել անցած նյութը:
- Ինչպե՞ս կարող եմ ստուգել:
- Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:
- Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով:

Գնահատման նպատակը ոչ թե որոշելն է, թե ով է ավելի լավը, ով՝ ավելի վատը, այլ պայմաններ ստեղծել, որպեսզի սովորողները հասնեն ամենաբարձր արդյունքների: Գնահատողը և գնահատվողը պետք է նախապես իմանան գնահատման պայմաններն ու չափանիշները, որոնք պետք է լինեն բազմազան: Գնահատման ընթացակարգի ամենակարևոր փուլը հետադարձ կապն է գնահատողի և գնահատվողի միջև:

## **ՁԵՎԱՎՈՐՈՂ ՊԵՆԱՏՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՔԱՅԼԱՇԱՐԸ**

Ուսումնական գործընթացը պլանավորելու և արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է նախապես իրականացնել նախնական հայտորոշում, որի համար կան բազմաթիվ միջոցներ: Օրինակ՝ նախնական հայտորոշիչ թեստ, բանավոր հարցում, գրավոր աշխատանք, գործնական աշխատանք, մուտքի քարտեր և այլն:

Ուսուցման և ուսումնառության ողջ ընթացքում պարբերաբար անցկացվում է ընթացիկ հայտորոշում, որը կարելի է անցկացնել տարբեր միջոցներով՝ բանավոր հարցման, գործնական աշխատանքի, զրույցի, թեստի, ինքնագնահատման, փոխադարձ գնահատման և այլն: Ցանկացած գործիքի կիրառմանը պետք է հաջորդի հետադարձ կապը, որը ձևավորող գնահատման կարևոր բաղադրիչներից է: Հետադարձ կապը լինում է երկու տեսակի՝ *արդարքին* և *ներքին*: *Արդարքին* հետադարձ կապն ապահովում է ուսուցիչ-սովորող, սովորող-ուսուցիչ կամ սովորող-սովորող կապը: *Ներքին* հետադարձ կապն ուսուցչի և սովորողների սեփական գործողությունների նկատմամբ կատարած ինքնաանդրադարձն է:

Հետադարձ կապի իրականացման միջոցներն են՝ բանավոր զրույց, գրավոր մեկնաբանություն, գծապատկերներ, տեսագրություն և ձայնային հաղորդագրություն:

Հետադարձ կապ ապահովելու սկզբունքներն են՝ անհատական, օբյեկտիվ և նրբանկատ, պատճառներ և բացատրություն, ճիշտ, տեղին, ժամանակին, մոտիվացիայի ապահովում, կարճ և հետաքրքիր:

### **Ձևավորող գնահատման գործիքները**

Ձևավորող գնահատման օրինակներ են՝ ցուցադրություն, ելքի քարտեր, գծապատկերների կազմում, հարցազրույց, ինքնագնահատում, զույգերով փոխադարձ գնահատում, խնդիրների լուծում, հարցազրույց, խմբային աշխատանք, հետազոտական աշխատանք և այլն:

Բոլոր այս գործիքները կիրառելով մենք կարող ենք կատարել ձևավորող գնահատում: Որոշիչն այստեղ ոչ թե գործիքի կիրառությունն է, այլ այն, թե ինչպե՞ս ենք մենք և մեր աշակերտները օգտվում գնահատման արդյունքում կատարված հետևություններից:

Ձևավորող գնահատումը տեղեկատվական դարձնելու ռազմավարություններ և գործիքներ՝

- Նպատակ-խրախուսանք-բարելավման ուղղություն
- Գնահատման ձևանմուշներ
- Ստուգացուցակներ
- Ռուբրիկներ
- Ինքնագնահատում, փոխադարձ գնահատում

Ձևավորող գնահատման ոչ ժամանակատար գաղափարներն են՝

1. *Արդյունավետ սկիզբ և ավարտ* – կարելի է կիրառել կարճ հարցաշար, դասի ավարտին սովորողները կարող են «3-2-1» մեթոդով անդրադառնալ իրենց աշխատանքին և ձեռքբերումներին:
2. *Նվազ ազդեցություն ունեցող թեստեր* – թեստերի կիրառումը արագ հետադարձ կապի հնարավորություն է տալիս և օգնում է լավ հասկանալ սովորողների կողմից հիմնական եզրույթների, տվյալների և գաղափարների յուրացումը:
3. *«Մեկ եղբայրդ հետևում է քեզ»* – ուսումնառության արդյունքները կարող են հեշտ չափելի լինել, անգամ եթե սովորողներին նման առաջադրանքներ են տրվում «Ընկերոջդ նամակ գրիր, որում բացատրում ես անցած թեմայի հիմնական գաղափարները», «Նկարիր պատկեր, որը ակնառու կդարձնի թեման», «Մտածիր նյութի շուրջ և հետո քննարկիր ընկերոջդ հետ»:
4. *Ձևաչափը՝ հարցազրույց* – կազմակերպել 3 րոպեանոց անհատական հարցազրույցներ սովորողների հետ, բաժանել զույգերի և տալ հետադարձ կապի տարբերակ:
5. *Արվեստ* – այն միջոցները, որոնք նախատեսում են դիտազննական ռեսուրսների շուրջ աշխատանք, կարող են ձևավորող գնահատման գործիք դառնալ:

Արդյունավետ հետադարձ կապի հնարներ՝

- «Սենդվիչ»
- «Չափանիշներ, սխալներ, արդյունք»
- «Ձեռքբերում, ուսումնառություն, փոփոխություն»

Հետադարձ կապը համարվում է հաջողված, եթե այն համապատասխանում է հետևյալ 3 կանոններին՝

- *Ընկալում* – սովորողի մոտ ձևավորվում է հստակ պատկերացում
- *Ընդունում* – երբ սովորողը ստացած տեղեկությունը ընդունում է



- *Հեռանկար* – սովորողը ցանկություն ունի ուղղելու սեփական սխալները, և նա արդեն կատարել է իր առաջին քայլերը:

Ձևավորող գնահատման ընթացքը՝

1. *Նպատակ* – սահմանել հստակ նպատակ
2. *Խրախուսանք* – տեղեկություն տալ սովորողի աճի մասին
3. *Բարելավման ուղղություն* – ինչն է անհրաժեշտ շտկել, ինչ ժամկետում և ինչ եղանակով:

Ձևավորող գնահատումը ուսուցչից պահանջում է՝

- ❖ Ապահովել բոլոր սովորողների ներգրավվածությունը
- ❖ Նյութեր կազմել և կիրառել
- ❖ Բարելավել դասավանդման որակը
- ❖ Անհատական մոտեցում ցուցաբերել սովորողների կարիքներին
- ❖ Առաջարկներ անել ուսումնական ծրագրի բարելավման ուղղությամբ
- ❖ Կիրառել բազմազան գնահատման գործիքներ:

Ձևավորող գնահատումը սովորողից պահանջում է՝

- ❖ Կիրառել ուսուցման տարբեր ոճեր
- ❖ Մասնակցել հետադարձ կապին, գնահատել իրեն և դասընկերներին
- ❖ Իմանալ գնահատման չափանիշները
- ❖ Կիրառել գիտելիքները առաջադրանքների կատարման համար

Ձևավորող գնահատումը թույլ է տալիս ծնողին՝

- ❖ Ստանալ ապացույցներ երեխայի ուսուցման մակարդակի մասին
- ❖ Տրամադրել աջակցություն
- ❖ Հետևել երեխայի ուսուցման առաջընթացին

Ձևավորող գնահատման տարբերակ է նաև *ջերմաստիճանը*: Այս մեթոդը նպատակ ունի բացահայտելու, թե սովորողները որքանով են ճիշտ կատարում հանձնարարությունները: Աշխատանքը հնարավոր է կատարել զույգերով կամ խմբերով: Սովորողներին տալիս ենք տարբեր քիմիական բանաձևեր, որոնք պետք է դասակարգեն ըստ բաժինների՝ օքսիդ, թթու, հիմք, աղ:

NaOH, H<sub>2</sub>SO<sub>4</sub>, CaO, H<sub>3</sub>PO<sub>4</sub>, MgO, KOH, CaCO<sub>3</sub>, HCl, Al<sub>2</sub>O<sub>3</sub>, H<sub>2</sub>CO<sub>3</sub>, Na<sub>2</sub>CO<sub>3</sub>

Աշխատանքը կատարելու ընթացքում մի պահ դադար ենք տալիս, սովորողներին հարցնում ենք՝ «ինչի վրա էիք աշխատում»: Սովորողները ներկայացնում են մինչ այդ պահը կատարված աշխատանքը, մյուսները հասկանում են, թե իրենցից ինչ է պահանջվում կատարել:

#### «Հարցադարան»

Հարցադարանը ներառում է մի շարք հարցադրումներ, կարող ենք իրագործել թեմայի ամփոփման ժամանակ: Օրինակ, հիմնական քիմիական հասկացություններ ուսումնասիրելուց հետո կարող ենք կազմել նմանատիպ հարցաշար՝

- 1) Ատոմ
- 2) Քիմիական տարր
- 3) Մետաղներ
- 4) Ոչ մետաղներ
- 5) Պարզ նյութեր
- 6) Բարդ նյութեր

Դասարանը բաժանում ենք խմբերի: Յուրաքանչյուր խմբի սեղանին դնում ենք քարտ՝ հետևյալ հարցերով՝

- Ինչ նոր բան այսօր սովորեցիք
- Ո՞ր տեղեկությունն էր ավելի հետաքրքիր
- Ինչն էր դժվար
- Ինչը խանգարեց աշակերտներին և ինչու՞:

#### «Ելքի քարտեր»

Ելքի քարտերով հավաքագրում ենք սովորողների պատասխանները: Օրինակ, թեման իոնական կապն է, նպատակը՝ քիմիական կապի առաջացման սկզբունքները, վերջնարդյունքը՝ բնութագրել իոնական կապը: Այդ պատասխանների հիման վրա կառուցվում է հաջորդ դասը՝

1. Նշիր 3 բան, որ հիշում ես նախորդ դասից
2. Նշիր 2 բան, որ կարևորում ես

3. Նշիր 1 բան, որ կուզենայիր կրկին անդրադառնալ:

«Չորս անկյուններ»

Թեմա - քիմիական ռեակցիաներ:

Նպատակը – սովորողը իմանա քիմիական ռեակցիաների 4 տեսակների մասին և սահմանի դրանք:

Վերջնարդյունքը – դասակարգել ռեակցիաները:

Դասարանի 4 անկյուններում փակցնում ենք 4 ցուցանակներ՝

1. Լիովին համաձայն եմ

3. Համաձայն չեմ

2. Համաձայն եմ

4. Բացարձակապես համաձայն չեմ

Ընթացքում, քննարկումները լսելուց հետո, կարող ենք փոխել անկյունը:

## Ինքնագնահատում

Սովորողը սովորում է ոչ թե թվանշանի համար, այլ որպեսզի իմանա և կարողանա պատասխանել հետևյալ հարցերին՝

- Ինչու՞ սխալվեցիր
- Մեկնաբանիր քայլերդ
- Լուծման ուրիշ ինչ տարբերակ կարող ես առաջարկել
- Առաջարկիր խնդրի լուծման քո տարբերակը
- Ապացուցիր, որ ես ճիշտ եմ կամ սխալ
- Ստուգիր պատասխանները
- Որտե՞ղ ես կանգ առել և ինչպիսի՞ օգնություն ես ուզում
- Եզրակացություններ արա աշխատանքիդ ընթացքի շուրջ:

## Փոխադարձ գնահատում

Փոխադարձ գնահատումը ձևավորող գնահատման գործիքներից է և կարող է իրականացվել հետևյալ տարբերակներով՝ սովորողը՝ սովորողին, խումբը՝ խմբին, սովորողը՝ խմբին, խումբը՝ սովորողին: Փոխադարձ գնահատման միջոցով սովորողները տեղեկանում են իրենց

աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի, սխալների մասին: Փոխադարձ գնահատման համար անհրաժեշտ միջավայր է, երբ սովորողների միջև առկա են համապատասխան որակներ և վերաբերմունք: Փոխադարձ գնահատում կարելի է իրականացնել քարտային, առանձին առաջադրանքների, ստուգաթերթերի և այլնի միջոցով:

Փոխադարձ գնահատման գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ քայլաշարով՝

- Առաջադրանք և գնահատման սանդղակ
- Փոխադարձ վերլուծություն
- Հետադարձ կապի ապահովում
- Հետադարձ կապի ընդունում
- Փոխադարձ մեկնաբանություններ
- Առաջադրանքի վերանայում
- Անդրադարձ

## **Եզրակացություն**

Կրթական գնահատումը գիտելիքների վերաբերյալ էմպիրիկ տվյալների փաստաթղթավորման և օգտագործման համակարգված գործընթաց է: Գնահատման տվյալները կարող են ստացվել սովորողների աշխատանքի ուղղակի ուսումնասիրությունից՝ ուսումնառության արդյունքների ձեռքբերումը գնահատելու համար կամ կարող են հիմնվել այն տվյալների վրա, որոնցից կարելի է եզրակացություններ անել ուսման վերաբերյալ: Գնահատումը հաճախ օգտագործվում է թեստի փոխարեն, բայց չի սահմանափակվում թեստով: Գնահատումը կարող է կենտրոնանալ անհատական սովորողի, սովորող համայնքի, դասընթացի, ակադեմիական ծրագրի, հաստատության կամ, որպես ամբողջություն, կրթական համակարգի վրա: Գնահատումը սովորողի մասին քանակական և որակական տվյալների հավաքագրումը, համադրումը և մեկնաբանումն է: Գնահատման միջոցով բացահայտվում է չփորոշիչներով նախատեսված կարողությունների, հմտությունների և գիտելիքների յուրացման աստիճանը: Գնահատման և դիտարկման նպատակն է սովորողի ուսուցումը դարձնել առավել արդյունավետ ու կողմնորոշված՝ նրա կարողություններին, հնարավորություններին ու նախասիրություններին համապատասխան: Գնահատումը իրականացվում է 10 միավորային սանդղակով, որևէ թիվ չի հանդիսանում անբավարար:

## Օգտագործված գրականության ցանկ

1. <https://kznakgnahatum.blogspot.com/>
2. ՀԿՄ (պաշարների շտեմարան հետազոտական աշխատանքներ)
3. <https://lib.armedu.am/>
4. <https://tatulshahnazaryan.design.blog/>
5. «ԿԶՆԱԿ» հիմնադրամ գնահատման մշակման և զարգացման բաժին, Կարինե Պողոսյան, Սաթենիկ Հայրյան